ուլերը եւ գառները: Մարօն բաժանեց նրանց հաց եւ պանիր, որ բերել էր իր հետ: Փոքրիկ հովուհիքն ուրախութեամբ ընդունեցին առատ նոէրը բարերար ձեռքից եւ իսկոյն սկսեցին ուտել:

Ես խօսեցրի մէկին, որին Մարօն կոչում էր Դիբօ:

— Ի՞նչ կանէս, եթէ գայլը քո գառներից մէկը գողանայ:

— Սօրօն չի թողնի, — պատասխանեց փոքրիկ հովուհին, խոժոռած աչքերով նայելով իմ երեսին:

— Ո՞վ է Սօրօն:

Նա փոխանակ պատասխանելու, երեսը շուռ տոեց, եւ մատները բերնին դնելով, շոացրուց: Ժայռերի ետեւից յայտնոեցաւ կապտագոյն շուն, որ մազոտ պոչը թափ տալով, վազեց Դիբոյի մօտ եւ խորին մտերմութեամբ սպասում էր նրա հրամանին:

Տեսնելով գազանին, ես ետ քաշոեցայ:

— Մի՛ վախիր, — քաջալերեց ինձ Դիբօն: — Սօրօին կ'ասեմ՝ քեզ չկծէ:

Ես ծիծաղեցայ: Մարօն գրկեց Դիբօին, համբուրեց նրա այրոած թշերը:

— Այստեղից մենք կը բաժանոենք, — դարձայ ես դէպի Մարօն:

— Կուզե՞ս, քեզ կը տանեմ մինչեւ Խանա-սորի ձորը, — ասաց նա ուրախ դէմքով: — Վախենում եմ ճանապարհը կորցնես:

Ես պատասխանեցի, թէ այդ խիստ դժոար կը լինէր նրա համար, որովհետեւ արեգակն արդէն սկսել էր այրել, եւ խնդրեցի միայն ցոյց տալ, թէ ո՞ր կողմից պէտք է գնալ: Նա այնպիսի ճշտութեամբ նկարագրեց ճանապարհի ընթացքը, մինչ ես մտածում էի, թէ աչքերս խփած կարող եմ գնալ: Երեւում էր, այն լեռների բոլոր շաւիղները, իրանց պտոյտներով, իրանց ելեւէջներով նրան ծանօթ էին: Նա գիտէր իւրաքանչիւր ժայռերը, աղբիւները, առոակները: Նա ճանաչում էր մինչեւ անգամ նշանաւոր թուփերը:

Ես հեռացայ: Մարօն երկար կանգնած «Ծակ-քարի» գլխին. հետազօտում էր իմ գնացքը, մինչեւ բլուրները թաքցրին իմ տեսութիւնից նազելի դէմքը:

ԺԷ. ԵՐԿՈՒ ՈՐՍ ՄԻԱՍԻՆ

Արեգակն արդէն բարձրացել էր իւր կէսօրեայ տեղը, նրա այրող ճառագայթները, հանդիպելով սարերի հովութեանը, թուլանում էին, կորցնում էին